ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/121

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ. Մարկոսյանի (պետական միասնական գրանցամատյանի քաղվածքի գրանցման համար՝ 264.110.04541)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ի 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրության հիման վրա, 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող

անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 30.07.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 22.04.2019թ. մասնակցել է «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 25.04.2019թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 22.04.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 136 503 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի արձանագրության 2.1 կետի համաձայն «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ և արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,

որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 22.04.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 136,503 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իր հաշիվներից օնլայն բանկինգ համակարգի միջոցով՝ 22.04.2019թ. /հայտը ներկայացնելու օր/ արդեն իսկ վճարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները 784 000 ՀՀ դրամ /համապատասխան անդորրագիրը կցվում է/, սակայն անհասկանալի պատճառներով հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ՊԵԿ-ի համակարգում երևացել է միայն 23.04.2019թ.:

Ստացվում է մի իրավիճակ, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը կատարել է նաև հարկային պարտավորությունների մասով իր պարտականությունները, որը սակայն ՀՀ ՊԵԿ-ի համակարգի թերացման հետևանքով զրոյացել է միայն 23.04.2019թ. այնուհետև, երբ Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ

զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ստացվել է պատասխան, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն /22.04.2019թ./ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 136 503 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Ընկերությունը հայտնել է, որ եթե նույնիսկ հաշվի առնենք այն հանգամանքը, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը, որը ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նույնաբովանդակ գործերի քննության շրջանակներում արդեն իսկ կայացվել են նմանատիպ որոշումներ, մասնավորապես՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/14, ՍՑ-ԷՍ-2018/86 և այլն:

Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/14 բողոքի վերաբերյալ կայացված որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտնել է՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1 343 049 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 25.03.2019թ. թիվ 6990 և թիվ 6961 փոխանցման անդորրագրերը, որոնց համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 25.03.2019թ. «900008000490» և «900005001186» գանձապետական հաշվեհամարներին իրականացվել են համապատասխանաբար 1 340 000 ՀՀ դրամի և 5 000 ՀՀ դրամ գումարի (ընդհանուր ՝ 1 345 000) վճարումներ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու նույն օրը՝ 25.03.2019թ. կատարվել են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած

պարտավորությունները՝ համապատասխան գանձապետական հաշվեհամարներին վճարելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորության չափը (1 343 049 ՀՀ դրամ) գերազանցող գումար (1 345 000 ՀՀ դրամ):

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Թիվ ՍՑ-ԷՍ-2018/86 ընթացակարգի վերաբերյալ կայացված որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտնել է՝

Ընկերության կողմից 05.06.2018թ. կատարված վճարումները ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համակարգում արտացոլվել են 06.06.2018թ.,

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.06.2018թ. «Լոաի-Արեգ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն Ընկերությունը 06.06.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 05.06.2018թ. կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարում, սակայն հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համակարգում երևացել է 06.06.2018թ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքում Ընկերության ժամկետանց հարկային

պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար «Լոաի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.06.2018թ. թիվ 03/26-3/11110-18 գրությամբ «Լոաի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/121 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների պահեստամասերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 16.04.2019թ. հայտարարվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Գնահատող հանձնաժողովի կողմից 23.04.2019թ. առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ են

ճանաչվել «Սեգ» ՍՊԸ-ն և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն: Գնահատման արդյունքում, ՊԵԿ կատարված հարցմանն ի պատասխան՝ 30.04.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունից պարզ է դարձել, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.04.2019թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց 136 503 ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

02.05.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/121 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/121 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/121 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **<u>22.04.2019թ.</u>** հայտ է ներկայացրել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի***

կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 136 503 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 22.04.2019թ. թիվ 001500 փոխանցման անդորրագիրը, որի համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 22.04.2019թ. «900008000490» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 784 000 ՀՀ դրամ գումարի վճարում:

6. Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՊԵԿ-ի կողմից 31.07.2019թ. տրամադրված թիվ 1024 տեղեկանքը, որի համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 23.04.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությունը, Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ի 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում

չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **22.04.2019թ.** հայտ է ներկայացրել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 136 503 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը:

Արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2019/121 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 22.04.2019թ. թիվ 001500 փոխանցման անդորրագիրը, որի համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 22.04.2019թ. «900008000490» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 784 000 ՀՀ դրամ գումարի վճարում:

Ընկերությունը ներկայացրել է նաև ՊԵԿ-ի կողմից 31.07.2019թ. տրամադրված թիվ 1024 տեղեկանքը, որի համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 23.04.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 01.08.2019թ. գրության՝ ՊԵԿ-ը 08.08.2019թ. գրությամբ հայտնել է, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի էլեկտրոնային անձնական հաշվի քարտում միասնական հաշվին 784 000 ՀՀ դրամ փոխանցումը ձևակերպված է 23.04.2019 թվականով: 22.04.2019թ. կատարված փոխանցման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տվյալների բազայում տեղեկություններ առկա չեն: 22.04.2019թ. հարկ վճարողի կողմից հարկային մարմին է ներկայացվել 2017 թվականի ռեզիդենտի շահութահարկի ճշտված հաշվարկ, որի արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 319 հոդվածի համաձայն՝ հաշվարկվել են տույժեր:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու նույն օրը՝ 22.04.2019թ. կատարվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած պարտավորությունը՝ համապատասխան գանձապետական հաշվեհամարին վճարելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորության չափը ***(136 503 դրամ)*** գերազանցող գումար ***(784 000 ՀՀ դրամ)***, որի մասին վկայում է նաև ՊԵԿ-ի կողմից 31.07.2019թ. տրամադրված թիվ 1024 տեղեկանքը, որի համաձայն՝ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն 23.04.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով, վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**